



ՍՈՒՐԲ ԶԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ Ե՛ ԿԵՂԵՅԻ

ՎԵՐԱՓՈԽՈՒՄ ՍՈՒՐԲ ԱՍՏԻԾԱԾԱՆԻ
13 ՕԳՈՍՏՈՍ 2017

Կիրակնօրեայ Ընթերցումներ	էջ 1
«Հորիզոն»ի Հարցազրույցը...	էջ 2
Ծանուցում	էջ 4

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՐԳ ԵՐԳՈՑ ԳԻՐՔԷՆ
(4.9-15, 9.6)

Փեսան.
Գրաւեցիր սիրտս, հոգեա՛կ իմ հարս, սիրտս
գրաւեցիր մէ՛կ նայուածքով, վզիդ շնորհալի մէկ
շարժումով:

Ի՛նչ զգլխիչ է սէրդ, հոգեա՛կ իմ հարս, որքա՛ն
աւելի քաղցր է սէրդ՝ գինիէն, եւ զգեստներուդ
անոյշ բուրմունքը՝ բոլոր խունկերէն:

Շրթներէդ մեղր կը կաթի, հոգեա՛կ իմ հարս,
մեղր ու կաթ կը ծորի լեզուէդ. եւ զգեստներուդ
անոյշ բուրմունքը նման է կնդրուկի բոյրին:

Փակուած պարտէզ է իմ հարս հոգեակս,
փակուած պարտէզ, կնքուած աղբիւր:

Նռնենիներու դրախտ մըն ես դուն ամենէն
ընտիր եւ բուրումնաւէտ տունկերով՝ հինայ ու

նարդոս, նարդոս ու քրքում,

խնկեղէ՛գ ու կինամոն, եւ

խնկաբեր բոլոր ծառերով՝

զըմուռս ու հալուէ, եւ

ընտիր բոլոր խնկենիները:

Բուրաստաններու աղբիւրն

ես. կեանքի ջուրին ալը, որ

Լիբանանէն կը բղխի:

Տէրը
ստեղծեց
եւ հաստա-
տեց քեզ ...

Տէրը ստեղծեց եւ հաստատեց
քեզ, մօրդ արգանդէն քեզ
պատրաստեց, ո՛վ կիներու
գեղեցկագոյնը. մայրդ անթերի
ծնաւ քեզ:

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ
(7.10-16)

Դարձեալ, Տէրը այս պատգամը ղրկեց
Աքազի, ըսելով. «Տէր Աստուծմէ՛դ քեզի
համար նշան մը խնդրէ, երկրի խորերէն կամ
երկինքի բարձունքէն»: Աքազ պատասխանեց.
«Ո՛չ, զԱստուած չեմ փորձեր»:

Այն ատեն նսայի ըսաւ.

«Լսեցէ՛ք ուրեմն, ո՛վ Դաւիթի տուն. չի՞ր բաւեր
որքան մարդոց համբերութիւնը հատցուցիք,
որ կը փորձէք Աստուծոյ
համբերութիւնը եւս հատցնել:

Ծիշդ այդ պատճառով Տէրը
ի՛նք հետեւեալ նշանը պիտի
տայ ձեզի.- Կոյսը պիտի
յղանայ եւ զաւակ մը ծնի,
որ «Էմմանուէլ» պիտի կոչէ:

Անիկա կարագով ու մեղրով
պիտի սնանի, եւ նախքան չարը ճանչնալը եւ
կամենալը՝ բարին պիտի ընտրէ. եւ տակաւին
անիկա բարին ընտրել ու չարը մերժել չսորված՝
երկու երկիրներն ալ, որոնցմէ՛ դուն կը վախնաս,
իրենց թագաւորները պիտի կորսնցնեն եւ քու
երկիրդ պիտի փրկուի»:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԳԱՂԱՏԱՑԻՆԵՐՈՒՆԳ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ
(3.29-4.7)

Ապա, ուրեմն, եթէ Քրիստոսի կը պատկանիք՝
կը նշանակէ թէ Աբրահամի զաւակներ էք եւ պիտի
ժառանգէք ինչ որ Աստուած անոր խոստացաւ:

Բայց գիտցէ՛ք նաեւ, թէ ժառանգորդ մը
թէպէտ ամբողջ ժառանգութեան իսկական տէրն
է, բայց որքան ատեն որ անիկա անչափահաս
է՝ տարբերութիւն չունի ծառայէ՛ մը, քանի

Կոյսը պիտի
յղանայ
եւ զաւակ
մը ծնի, որ
«Էմմանուէլ»
պիտի կոչէ:

Որքան
ատեն որ
հոգեւորապէս
անչափահաս
էինք՝ բնութեան
ոյժերուն:
Կ'ենթարկուէինք
ու կը
ծառայէինք:

յարմար ժամանակը հասած համարելով, Աստուած
աշխարհ զրկեց իր Որդին, որ մարդկային մօրմէ մը

... Աստուած
մեր
սիրտերուն
մէջ դրկեց
իր Որդիին
Հոգին, որով
զԱստուած
«Հայր» կը
կոչենք:

խնամակալներու եւ հոգա-
բարձուներու ենթակայ
է, մինչեւ հասնի իր հօրը
որոշած ժամանակակէտը:
Նոյնն է մեր ալ պարագան:
Որքան ատեն որ հոգե-
ւորապէս անչափահաս
էինք՝ բնութեան ոյժերուն
կ'ենթարկուէինք ու կը
ծառայէինք: Բայց հիմա
տակ ապրեցաւ, որպէսզի մեզ
օրէնքին գերութենէն փրկէ եւ
Աստուծոյ որդիներ դարձնէ:
Արդ, որովհետեւ իր որդիներն
ենք՝ Աստուած մեր սիրտերուն
մէջ զրկեց իր Որդիին Հոգին,
որով զԱստուած «Հայր»
կը կոչենք: Ուստի, այլեւս
ծառայ չէք, այլ որդի՝ եւ
քանի որդի էք՝ Աստուծոյ
խոստումը պիտի ժառանգէք:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ (2.1-7)

Այդ օրերուն Օգոստոս կայսր հրամանագիր
հանեց՝ իր կայսրութեան սահմաններուն մէջ
գտնուող բոլոր բնակիչներուն մարդահամարը
կատարելու: Այս առաջին մարդահամարը տեղի
ունեցաւ Սուրիոյ կառավարիչ Կիւրենիոսի
օրերուն: Ամէն մարդ իր ծննդավայրը կ'երթար
իր անունը արձանագրել տալու համար: Յովսէփ
Դաւիթի սերունդէն ըլլալուն համար, Գալիլայի
Նազարէթ քաղաքէն ելաւ եւ իր անունը
արձանագրել տալու համար գնաց Հրէաստանի
Բեթլեհէմ քաղաքը՝ Դաւիթ թագաւորի
ծննդավայրը: Իրեն կ'ընկերանար իր նշանածը՝
Մարիամ, որ յղի էր:

Բեթլեհէմի մէջ, Մարիամի ծննդաբերութեան
ժամանակը հասաւ եւ ծնաւ իր անդրանիկ
զաւակը, որ փաթթեց խանձարուրի մէջ եւ դրաւ
մսուրի մը մէջ, որովհետեւ պանդոկին մէջ իրենց
համար տեղ չկար:

«ՀՈՐԻԶՈՆ»Ի ՀԱՐՑԱԶՐՈՅՑԸ

«Նոր Ծաղիկ» Երգչախումբի Խաբապուր՝ Էլօ Հարությունյանի հետ

Այս տարի Ս. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ
«Նոր Ծաղիկ» մանկապատանեկան երգչախումբին
հիմնադրութեան 10-ամեակն է եւ այդ առթիւ
Հոկտեմբերին երգչախումբը բացառիկ ելոյթ պիտի
ունենայ: Ստորեւ «Հորիզոն»ի հարցազրոյցը խմբա-
վար տիկին Էլիզապէթ Պողոսի Հարությունյանի հետ.

Հ.- «Նոր Ծաղիկ» երգչախումբը ե՞րբ հիմ-
նադրուեցաւ, ինչպէ՞ս եւ որո՞ւ նախաձեռնու-
թեամբ:

ԷՀ.- Մանկապատանեկան երգչախումբի
գաղափարը ունեցած էր Ս. Յակոբ եկեղեցւոյ հո-
վիւ Տ. Գառնիկ Աւ. Քհն. Գոյունեան: Տէր Հօր
առաջարկով եւ եկեղեցւոյ հոգաբարձութեան
հաւանութեամբ՝ 2006-ի աշնան ստանձնեցի երգ-
չախումբին խմբավարութիւնը, եւ սկսան «Նոր
Ծաղիկ»ի աշխատանքները: 25 փոքրիկներով սկսան
փորձերը: Ներկայիս երգչախումբը ունի 50 անդամ:
«Նոր Ծաղիկ»ի հիմնադրութենէն մինչեւ օրս երգ-
չախումբին մաս կազմած է 180 փոքրիկ: 2007-ի հա-
մերգին մասնակցող անդամներէն խումբ մը, իրենց
իսկ փափաքով, մաս պիտի կազմեն յառաջիկայ
համերգին: Մեր փորձերը տեղի կ'ունենան Ուրբաթ
օրերը ժամը 4.30-6.00: Փորձէն առաջ փոքրիկներուն
կը հրամցուի նախընթրիք մը, որովհետեւ անոնք
դպրոցէն բաւական յոգնած եւ ուժասպառ կու գան:
Փորձերը կը սկսինք ձայնամարդութեամբ ապա
կ'անցնինք երգացանկին:

Հ.- Առ այսօր քանի՞ համերգով ներկայացաք մեր
ժողովուրդին եւ ի՞նչ էին յայտագիրները:

ԷՀ.- Նախ կ'ուզեմ յիշել, որ խումբը տարուան
ընթացքին տօնական առիթներու կ'երգէ Մ. Եկ-
մալեանի պատարագը, երբեմն ալ Կոմիտասեան պա-
տարագէն բաժիններ, եւ միշտ բացառիկ գնահատան-
քի կ'արժանանայ ժողովուրդին կողմէ: Առ այսօր
«Նոր Ծաղիկ»ը մոնթրէալահայութեան ներկայացած
է 10 համերգով եւ տարբեր երգացանկերով: Այս
համերգներէն էին. «Հայ մանուկի տարի»ին
նուիրուածը՝ 2011-ին, «Հայ գիրքի տպագրութեան
500-ամեակ»ին նուիրուածը՝ 2013-ին, «Նանորին
ուխտը» քերթուածերգը, որ նուիրուած էր Հայոց
ցեղասպանութեան 100-ամեակին՝ 2014-ին, «Կոմի-
տասեան համերգ»ը՝ 2015-ին, երբ Կոմիտասի եկե-
ղեցական, ազգագրական եւ մանկական երգերէն
փունջեր երգուեցան:

Հ.- Ի՞նչ եղաւ «Նոր Ծաղիկ»ի արգասիքը:

ԷՀ.- Ինչպէս յիշեցի, մեծ թիւով փոքրիկներ մաս

կազմեցին «Նոր Ծաղիկ»ին, եւ հոն սերունդ մը մարզուեցաւ՝ ծանօթանալով հայ երաժշտութեան: «Նոր Ծաղիկ»ը դարձաւ հայեցի դաստիարակութեան եւ մշակոյթի պահպանման օճախ մը: Հոն մեր փոքրիկները սորվեցան երգել առանց պոռալու, մեղմ եւ ճշգրտօրէն:

Հ.- Ի՞նչ է այս տարուան բացառիկ համերգին յայտագիրը:

ԷՀ.- Նախ ըսեմ, որ այս տարուան համերգը կը զուգահեռաբար «Նոր Ծաղիկ»ի հիմնադրութեան տասնամեակին, այդ առիթով որոշեցինք մոնթրէ-ալահայութեան հրամցնել բացառիկ համերգ մը, որ կը բաղկանայ երկու բաժինէ: Առաջին բաժինը կ'ընդգրկէ հայրենաբնակ յայտնի երաժիշտ-երգահան Արեգ Լուսինեանի մանկական գեղեցիկ եւ բազմաձայն երգերէն փունջ մը: Երկրորդ բաժինը կ'ընդգրկէ առաջին մատուցում մը «Մանկապատանեկան Պատարագ»ի, որուն երգահանը դարձեալ Արեգ Լուսինեանն է: «Մանկապատանեկան Պատարագ»ին խօսքերը գրուած են Ս. Պատարագի խօսքերուն ներդաշնակաբար եւ աշխարհաբարով: Խօսքերը յարգած են Ս. Պատարագի երգերուն իմաստներն ու կշռոյթները: «Մանկապատանեկան Պատարագ»ը կը բաղկանայ եռաձայն 17 երգերէ եւ ունի երգեհոնի նուագակցութիւն:

Հ.- «Նոր ծաղիկ»-ի փոքրիկները ինչպէ՞ս ընդունեցին այս գործը, որեւէ դժուարութիւն ունեցա՞ր:

ԷՀ.- Արեգ Լուսինեանի յօրինած երգերէն մէկ քանին «Նոր Ծաղիկ»ը մեծ հաճոյքով մեկնաբանած է անցեալին, զանազան համերգներու ընթացքին: Սակայն մանկապատանեկան պատարագ սորվեցնելը մեծ մարտահրաւէր մըն էր ինծի համար, քանի որ խումբիս անդամները մեծամասնութեամբ գուրկ են երաժշտական հիմնական գիտելիքներէ: Սակայն, ինչպէս այլ մարտահրաւէրներ ստանձնած էի, այս ալ ստանձնեցի: Քանի որ այս պատարագը սքանչելի յօրինում մըն է եւ առաջինը՝ հայ իրականութեան մէջ: Խումբը մեծ հաճոյքով եւ լրջութեամբ սորվեցաւ: Դիւրին չէր աշխատանքը, սակայն համերգութեամբ եւ յարատեւ ճիգով յաղթահարեցինք բոլոր խոչընդոտներն ու դժուարութիւնները: Հոս տեղին է յիշել խումբին ընկերակցող դաշնակահարուհի տիկին Դալար Հարպոյեան Գալլօլլեանի ունեցած մեծ ներդրումը: Ան իր երաժշտական բացառիկ հմտութեամբ եւ ժրաջանօրէն կը մասնակցի «Նոր Ծաղիկ»ի փորձերուն:

Հ.- Ինչպէ՞ս կը գնահատէք «Մանկապատանեկան Պատարագ»ին երաժշտութիւնը:

ԷՀ.- Անիկա ունի գեղեցիկ եւ հրեշտակային ոլորտներ, արտայայտելու զգայուն կերպեր: Արուեստի բացառիկ եւ ազնուական գործ մըն է, ուր մտածումը, երաժշտութիւնը եւ հաւատքի զգացումները միասնաբար զարգանալով կը կազմեն ներդաշնակ ամբողջութիւն մը: Համոզուած եմ, որ այս գեղեցիկ յօրինումը հայ եկեղեցւոյ երաժշտական

ժառագութեան մէջ պատուոյ տեղ պիտի գրաւէ եւ պիտի յաւերժանայ:

Հ.- Ինչպէ՞ս եղաւ Արեգ Լուսինեանի ընտրութիւնը:

ԷՀ.- Պրն. Արեգ Լուսինեանի գործերուն ծանօթ էի տարիներ առաջ: Անձնապէս իրեն ծանօթացած էի Պէյրութ իր այցելութեան ընթացքին: Ան լսած էր Գ տարեկան դուստրիս՝ Փաթիլին դաշնակի մեհնահամերգին գովքը եւ փափաք յայտնած էր, որ անձամբ ունկնդրէր Փաթիլին դաշնակահարութիւնը: Ուստի պատիւը ունեցած էինք զինք ընդունելու մեր տան մէջ: Իմ ծանօթութիւնս Արեգ Լուսինեանի հետ աւելի զարգացաւ «Նոր Ծաղիկ»ի համերգային երգացանկերու պատրաստութեանց ընթացքին: Ուստի, երբ Տ. Գառնիկին հետ միասնաբար որոշեցինք «Մանկապատանեկան Պատարագ»ի մը յօրինումը, անմիջապէս նկատի ունեցանք զինք: Ուստի առաջարկեցինք պրն. Արեգ Լուսինեանին, որ ինք ստանձնէր այս գործը: Ան սիրայօժար ընդունեց մեր առաջարկը եւ անցաւ աշխատանքի: Ամիսներու տքնաշան աշխատանքէ հոք ամբողջացուց յօրինումը: Այստեղ յատկապէս պէտք է յիշել տիկին Շաքէ Կէօնճեանի առատաձեռն մեկենասութիւնը, որ սատարեց «Մանկապատանեկան Պատարագ»ի իրականացման:

Հ.- Ե՞րբ եւ ո՞ւր տեղի պիտի ունենայ «Նոր Ծաղիկ»ի տասնամեակին նուիրուած համերգը:

ԷՀ.- Համերգը տեղի պիտի ունենայ 21 Հոկտեմբեր 2017-ին, երեկոյեան ժամը 7:00-ին, Centre Armenie, 1025 Boul. Elizabeth, Laval:

Համերգին պիտի վաճառուի նաեւ «Մանկապատանեկան Պատարագ»ին խտասալիկը, որուն մեկենասներն են տէր եւ տիկին Մանուկ Զոխաճեանները: Նշեմ, որ պրն. Արեգ Լուսինեան անձամբ ներկայ պիտի ըլլայ «Մանկապատանեկան Պատարագ»ի անդրանիկ մատուցման, եւ համերգին հասոյթը պիտի նուիրուի Ստեփանակերտի ՀՕՄ-ի «Սօսէ» մանկապարտէզին:

Հ.- Ինչի՞նչ մէջ կը կայանայ «Նոր Ծաղիկ»ի յաջողութիւնը:

ԷՀ.- Ինչպէս կ'ըսէ առածը՝ մէկ ծաղիկով գարուն չի գար: «Նոր Ծաղիկ»ին յաջողութիւնը կը կայանայ խումբ մը անձերու միասնակամ եւ նուիրաբար աշխատանքին մէջ: Իմ աջ բազուկս՝ դաշնակահարուհիս Դալար Հարպոյեան Գալլօլլեանը (դուստրս), իր մեծ բաժինը ունի այս գործին յաջողութեան մէջ: Ան իր նուագակցութեամբ առաւել կը փայլեցնէ «Նոր Ծաղիկ»ը: Իսկ երէցիկն Նինա Գոյունեանի գործնական աջակցութիւնը խումբի զանազան աշխատանքներուն՝ գերազանցօրէն գնահատելի է: Ան կ'աշխատի բացառիկ բժախնդրութեամբ եւ հասկացողութեամբ: Այս առթիւ շնորհակալութիւն կը յայտնեմ նաեւ Ծնողական յանձնախումբին եւ ծնողներուն, Ս. Յակոբ Առաջ. Մայր եկեղեցւոյ Հոգաբարձութեան եւ հովիւին, որոնք տարիներէ ի վեր զօրավիգ կը կանգնին եւ կը քաջալերեն զիս ու «Նոր Ծաղիկ»ը:



Ս. ՅԱԿՈԲ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

Մանկապատանեկան Պատարագ

Զօն Նոր Ծաղիկի
Տասնամեակին



Երգահան՝ Արեգ Լուսինեան



Խմբավար՝ Տիկ. Էյո Պաղունի-Հարպոյեան
Երգեհոնահար՝ Տիկ. Դալար Հարպոյեան-Գալլօլեան

Շաբաթ, 21 Հոկտեմբեր 2017-ի
երեկոյեան ժամը 7.00-ին

CENTRE ARMÉNIÉ

1025 Boul. Elizabeth, Laval (Qc) H7W 3J7

Օրհնութեամբ՝
ԲԱԲԳԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
ՉԱՐԵԱՆԻ

Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմին

Համագործակցութեամբ՝
ՀՕՄԻ Գանատայի Երջանային Վարչութեան

Նախագահութեամբ՝
Տիկ. Շաքէ Կեօնճեանի

Սատարով՝
Բատրմանճեան Հիմնադրամին
Տ. եւ Տիկ. Արսէն Տրվիշեանի
Տ. եւ Տիկ. Մանուկ Զուխանեանի



Ի նպաստ
Մանկապատանեկան
(Արցախ) ՀՕՄԻ Սօսէ
մանկապարտէզին

ՏՈՄՍԵՐՈՒ ԱՄԱՀՈՎՈՒՄ
ԵՒ ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆ
514-331-5445 X 202